ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 22.10.2015թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 40/15

ԳԲԽ-40/15 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից և հիմք ընդունելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի՝ ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՃՈ/ՍՌ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթաակարգ) չկայացած հայտարարելու հանգամանքներում բողոքն առանց քննության թողնելու մասին 20.10.2015թ դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 20.10.2015թ. եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից հայտարարված ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար սերվերների ռեզերվային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՃՈ/ՍՌ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու (Ընթացակարգը չկայացած հայտարարելու) մասին «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 16.10.2015թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Նազարյան Մանե**